ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Գալստյան Նունե Հմայակի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գորիսի թիվ 3 հիմնական դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդասարյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն…….…... 3
2. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը <<Մայրենիի>> դասավանդման ընթացքում…… 7
3. Արժեհամակագի ձևավորման իմ փորձը <<Մայրենիի>> դասաժամերին……13
4. Եզրակացություն……...16
5. Օգտագործածա գրականության ցանկ……..18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երբ չգիտես, թե ուր ես գնում, ոչ մի ճանապարհով էլ տեղ չես հասնի։

Հենրի Քիսինջեր

Ինչպիսի՞ հասարակությունում են ապրելու մեր երեխաները վաղը։ Այս հարցի պատասխանի կարևոր մասն ընկած է այն կրթության մեջ, որ նրանց տալիս ենք այսօր։ Կրթությունն առանցքային դեր ունի ապագայի ձևավորման հարցում և արտացոլում է աշխարհի այն տեսակը, որն ուզում ենք ստանալ հետագա սերունդների համար։Արդի ժամանակաշրջանում և ժամանակակից աշխարհում կրթության հենքն և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեքային համակարգի ձևավորումը։

<<Արժեհամակարգ>> հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է լայն շառավիղով։ Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեքային համակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային, էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի կամ աշակերտի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար։

Արժեքների ձևավորման, արժեքային համակարգի հստակեցման ամբողջ գործընթացը դիտվում է անձի կայացման և սոցիալականացման գործընթացի հետ միասին, կազմում նրա անբաժանելի մասն և պայմանավորում անձի (աշակերտի) վարքը։ Արժեքային համակարգի ձևավորումը միանգամից տեղի ունենալ չի կարող, այն աշակերտի մեջ սերմանվում է քայլ առ քայլ, կաթիլ առ կաթիլ և ցանկալի արդյունքը շատ հաճախ տեսնում ենք տարիներ անց՝ երբեմն դպրոցն ավարտելուց հետո։

Կյանքի ընթացքում որոշ արժեքներ ամրապնդվում են, իսկ որոշներն էլ՝ ձևափոխվում կամ արժեզրկվում։

Արժեքային համակարգը թույլ է տալիս անձին գնահատել շրջակա աշխարհը, արժեքների միջոցով իրականության առարկաներն ու երևույթները բնութագրվում են հասարակական նշանակություններով։

Աշակերտի (անձի) արժեքները հիմնականում, ձևավորվում են մանուկ հասակից։ Ճիշտ վարվելու մասին պատկերացումներն ու խոսելու հմտությունները հաճախ հստակեցվում են ծնողների, ընտանիքի այլ անդամների ազդեցության ներքո։

Զարգացման հետ զուգընթաց երեխայի արժեքային համակարգի ձևավորման վրա իրենց ազդեցությունն են թողնում ընկերները, ուսուցիչները, այսինքն ընդլայնվում է արժեքների յուրացման ու ձևավորման շրջանակը, երեխան (աշակերտը) սկսում է ընտրողաբար կառուցել սեփական արժեքային համակարգը։

Արժեքային համակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները։ Մասնավորապես անգնահատելի է Հայոց լեզվի և գրականության դերը։ Իսկ տարրական դասարաններում շեշտը իհարկե դրվում է <<Մայրենի>> առարկայի դասավանդման հիմքում։ Տարրական դպրոցում <<Մայրենի>>-ի դասվանդման, ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման, մեթոդների ընտրության , նպատակային և հետևողական կիրառման համատեքստում ամրապնդվում է աշակերտների բարոյական, հոգևոր, գեղագիտական, իմացական, մշակութային և ազգային արժեքների ձևավորումը։ Գաղտնիք չէ, որ ուսուցիչը դասապրոցեսում լուծում է թե՛ ուսումնական, թե՛ դաստիարակչական խնդիրներ։ Յուրաքանչյուր դասընթացում ուշադրություն պետք է դարձնել, որ դաստիարակչական և ուսումնական խնդիրները մեկտեղվեն, համընթաց զարգանան։ Այսինքն, շատ կարևոր է, որ ուսուցչի աչքը լինի ամենատես, հոգին լինի ամենազգաց, իսկ միտքը լինի ամենաընթաց։

Ընտրված թեման **արդիական է** նրանով, որ դասին ներկայացվող դաստիարակչական պահանջները ինչպիսի՞ արժեքային համակարգ կձևավորեն աշակերտների շրջանում և ուսուցման գործընթացում ինչպիսի՞ նպատակներ կհետապնդեն՝ օրինակ՝

1. Հաղորդակցական հմտությունների ձևավորում,
2. Համագործակցային կարողությունների ձևավորում,
3. Միմյանց լսելու, միմյանց կարծիքը գնահատելու կարողությունների ձևավորում,
4. Միմյանց նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորում։

Հետազոտական աշխատանքի **նպատակներն են՝**

1. Կարողությունների և հմտությունների ձևավորումը, արժեքային համակարգի ձևավորումը, զարգացումը, կատարելագործումը,
2. Լեզվի, մշակույթի, պատմության հանդեպ հարգալից վերաբերմունքի ձևավորումը,
3. Ազգային ավանդույթների պահպանման անհրաժեշտության գիտակցումը,
4. Հայրենիքի պաշտպանության գործում սեփական դերի գիտակցության ձևավորում։

Այս ամենի ապացույցն այն է, որ երբ մենք աշակերտներին հանձնարարում ենք նկարել ՀՀ դրոշը, բացի գեղեցիկ նկարելը, իմանան նաև դրոշի գույների նշանակությունը, կարողանան բացատրել դրոշն որպես ազգային արժեք ինչպիսի նշանակություն ունի հայերիս համար։

Հետազոտական աշխատանքի **խնդիրներն են՝**

1. Մայրենի լեզվի դերի ու նշանակության գիտակցում, կրտսեր դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման ուսուցանում։
2. Տրամաբանական կարողությունների խթանում
3. Սեփական արժեքների, իրավունքների, պարտականությունների գիտակցում
4. Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում։
5. Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը <<Մայրենի>> առարկայի դասավանդման ժամանակ։

5-րդ դասարանի Մայրենիի դասագրքում կա այսպիսի արտահայտություն. <<Հայը պետք է հայերեն ստորագրի>>։ Սա ևս իրենից ներկայացնում է արժեք՝ ազգասիրությունը նախընտրելու, իսկ օտարամոլությունը՝ ժխտելու։ Ուսուցիչը այս հարցում էլ պետք է հետևողականություն դրսևորվի, որպեսզի աշակերտը այդ տարիքից դրսևորի հայրենասիրություն, քանի որ ապագայում դրա կրողը լինելու է հենց ինքը։

Դպրոցը, լինելով առավելապես պահպանողական կառույց, մշտապես փորձում է կողմնորոշվել դեպի աշակերտը։ Պետք է կարողանալ ուսումնական գործընթացը

կազմակերպել այնպես, որ բացահայտվեն յուրաքանչյուր դպրոցականի անհատական առանձնահատկությունները, որ նրա համար սովորելը դառնա անհատական պատասխանատվության գիտակցում, ինքնուրույն լինելը՝ վարքագծի բնականոն դրսևորում: Այս ամենը չի կարող իրականացվել առանց համապատասխան դասագրքի, որը գրված է հենց այդ նկատառումները հաշվի առնելով, որը գիտելիքների ձեռքբերման և համակարգման, ինքնավերահսկման և ինքնագնահատականի, արժեքային համակարգի, աշխարհայացքի ձևավորման հնարավորություն է ընձեռնում: Իսկ ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումների և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ Մայրենիի դասաժամերին առավել օգտակար է թե՛ խմբային, թե՛ անհատական աշխատանքը, քանի որ աշակերտները սովորում են իրար լսել, հարգել միմյանց կարծիքը, խմբային եզրահանգումներ կատարել և տալ վերջնական և ավարտուն պատասխան: Իսկ վերջինս էլ նպաստում է արժեքային որոշակի համակարգի ստեղծման: Այդ դեպքում աշակերտները ինքնակազմակերպմամբ և ինքնավերահսկմամբ, ինքնուրույն պատրաստակամություն են հայտնում դուրս գալ դժվարին իրավիճակից;

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժի ուշադրության կենտրոն:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը <<Մայրենիի>> դասավանդման ընթացքում

Ուսուցիչ դաստիարակը պետք է լինի համբերատար, ուշադիր, հոգատար, սիրի իր սաներին, լինի կրթված և դաստիարակված, անընդհատ ու անդադար հարստացնի իր գիտելիքները, նյութը մատուցի պարզ (ոչ պարզագույն) ու հասկանալի, մատչելի ու հասանելի, նա պետք է լինի ոչ կրկնվող, այլ մշակող, վերլուծող, համադրող, պարզաբանող, մեկնաբանող...խոսքը՝ պատկերավոր, գրավիչ, օրինակներով հարուստ:

Եսայի Նշեցի

Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք՝ հաստատուն էթիկական նորմերով, որտեղ աշակերտները պետք է սովորեն դրանց համապատասխանել: Լ. Ս. Վիգոտսկին ձևակերպել է մի օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ գործունեության ընթացքում են զարգանում խնդիրները միասին լուծելու կարողությունները՝ ինքնուրույն իմացական գործունեությունը, շահագրգռվածություն ցանկացած խնդիր վերլուծելու և հանգուցալուծելու համար: Իսկ այստեղ տեղին է անդրադառնալ Ա. Դիստերվերգին: Նա գտնում էր, որ երեխային բնորոշ է զարգացման ձգտումը, որի բավարարման համար պետք է արթնացնել նրա ձիրքերը իր բնությանը համապատասխան:

Արժեքներն ընկած են որոշակի վարքագծային ընտրությունների համար պատժամիջոցների և այլ վարքագծերի համար պարգևատրումների հիմքում: Արժեքային համակարգը ներկայացնում է, թե ինչ է ակնկալվում և ինչի հույսը կա, ինչ է պահանջվում կամ ինչն է արգելված [2, էջ 91-92]:

Փորձենք հասկանալ թե ինչպես է ձևավորվում աշակերտի արժեքային համակարգը մայրենիի դասավանդման ընթացքում: Մայրենի լեզվի ծրագրերում ընդգրկված նյութը համապատասխանում է տարիքային տվյալ խմբի առջև դրված նպատակներին և խնդիրներին այսինքն՝ չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին ամբողջությամբ:Նկատի ունենալով սովորողների տարիքային

առանձնահատկությունները, նրանց հետաքրքրության շրջանակը և պահանջմունքները՝ պետք է նշել.

1. Տարրական դպրոց. 6-9-րդ տարեկան աշակերտների հետաքրքրության շրջանակը պտտվում է մեջ շրջապատող բնության, կենդանական և բուսական աշխարհների շուրջ. հետևաբար տեքստերը, ընթերցանության նյութերը հիմնականում պիտի ներկայացնեն երեխային շրջապատող կենդանական և բուսական աշխարհը.

2. Միջին դպրոցի առաջին աստիճան. 10-13 տարեկան աշակերտների հետաքրքրության ոլորտը ժողովրդական զրույցները, լեգենդները, առասպելները, դյուցազներգություններն են, այսինքն՝ առասպելական աշխարհն է. հետևաբար 5-6-րդ դասարաններում տեքստերը հիմնականում բանահյուսական նյութեր և դրանց հեղինակային մշակումներն են: [3]

1-6-րդ դասարաններում մայրենի լեզվի ծրագրերը ներկայացված են աղյուսակների տեսքով: Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը,
2. Նպատակները,
3. Վերջնարդյունքները,
4. Բովանդակությունը,
5. Առաջարկվող գործունեության ձևերը,
6. Խաչվող կամ ընդհանրական հասկացությունները
7. Միջառարկայական կապերը:

Երկրորդ դասարանում մայրենիի ուսուցման գործընթացում կարևորվում է ժողովրդական բառ ու բանի դերը <<Ժողովուրդը իմաստուն է>> թեմայի շրջանակներում՝ իբրև ժողովրդական ստեղծագործություններ ներկայացնելով հանելուկը, դարձվածքը, հեքիաթը, շուտասելուկը, խնդուկը, խաղիկ-տաղիկը, առածը,

որոնց ուսուցումը պետք է շարունակել առօրյա-խոսակցական ոճում կիրառվող կայուն արտահայտությունների զուգադրման եղանակով։

Երրորդ դասարանում ավելանում է ինքնուրույն աշխատելու պահանջը, ինչի ընթացքում սովորողը, կատարելով լեզվական <<հայտնագործություններ>>, ձեռք է բերում նոր հմտություններ՝ դառնալով ավելի գրագետ։ Ուստի անհրաժեշտ է սովորողներին առաջարկել այնպիսի բազմաբնույթ առաջադրանքներ, որոնք նպատակաուղղված են ոչ միայն խոսքի զարգացման, այլև երեխայի՝ որպես ինքնուրույն, ինքնավստահ անձի, նրա ստեղծագործական երևակայության, մտածողության և արժեքային համակարգի ձևավորմանը։

Չորրորդ դասարանի աշակերտները առավել ակտիվ են լինում հայրենասիրությանն վերաբերող թեմաների շրջանակներում։ Արժեքները աշակերտներին ներկայացվում են առաջին հերթինգրական, պատմական հերոսների օրինակով։ Երբ որ ուսումնասիրում էինք <<Մասիսից դեպի Ագռավաքար>> թեման, աշակերտներին առավել հետաքրքիր էր Արտավազդ թագավորի կերպարն, որն ըստ առասպելի շղթայված էր Մասիս լեռան քարանձավում։ Հավատարիմ շները կրծում էին շղթաները,որ ազատեն նրան։Այս թեմայի ավարտին աշակերտները պետք է կարողանան պատասխանել հետևյալ հարցերին՝

1. Ո՞վ ենք մենք։
2. Որտե՞ղ ենք մենք ժամանակի և տարածության մեջ։
3. Ինչպե՞ս ենք մենք ինքնարտահայտվում։

Արժեքային համակարգի ձևավորման հարցում, կարևոր ներդրում ունեն հետևյալ թեմաները.

- << Սասունցի Դավիթը կռվում է դևերի դեմ>>։
- << Թորգոմ Նահապետի և Հայկ Նահապետի զրույցը >>։
- << Մենք քիչ ենք, բայց հայ ենք>>։
- << Չնվաճված աշխարհամաս>> և այլն։

Կյանքում հարազատ ու թանկ բաներ կան, որոնք չես կարող կորցնել, եթե հայի քո տեսակը մեր հաղթանակների պտուղն է՝ ուսումնատենչ, ինքնավստահ, հավատավոր։

Հպա՛ռտ նայիր աշխարհին։

Այս թեմաների ավարտից հետո աշակերտը պետք է կազմավորի իր արժեքային համակարգը, մասնավորապես՝

Ունենա որոշակի պատմական, աշխարհագրական գիտելիքներ Հայաստանի մասին, ինչպես նաև պատկերացումներ ունենա նշանավոր հայերի, հայկական մշակույթի, ազգային արժեքների մասին, գնահատի և դրսևորի դրական վերաբերմունք։

1. Արտահայտի սեփական տեսակետները
2. Քննարկի իր ցանկությունները, ճանաչի և խոսի իր զգացմունքների մասին՝ մտքերն արտահայտելով պարզ և հասկանալի ձևով, պահպանի հայերենի ուղղախոսական կանոնները
3. Նկարագրի տարաբնույթ երևույթներ
4. Մասնակցի քննարկումների, լսի և հասկանա արտահայտած մտքերը
5. Սիրի ինքն իրեն, իր ընտանիքը, հարգի ընկերներին, ուսուցիչներին
6. Գիտակցի սովորելու կարևորությունը
7. Ցուցաբերի հոգատարություն սեփական անձի, շրջապատող մարդկանց ու շրջակա միջավայրի նկատմամբ
8. Հարգանքով վերաբերվի մարդկանց և նրանց արտահայտած տեսակետներին։

Ուսուցչի կատարած քրտնաջան աշխատանքը 1-4-րդ դասարաններում հանգում է այն եզրահանգմանը, որ աշակերտը կարողանա ճանաչել սեփական ներաշխարհը, արժեքները, անձնական, ֆիզիկական, մտավոր, հոգևոր, սոցիալական ձեռքբերումները, մարդկային փոխհարաբերությունները ընտանիքում, ընկերների միջև, իրավունքները և պարտականությունները և վերջապես ի՞նչ է նշանակում լինել մարդ։ Որովհետև մարդը բարձրագույն արժեք է, քանի որ բնության մեջ միայն մարդն է համարվում բանական էակ։ Այստեղ կարող ենք ավելացնել, որ բանականությամբ օժտված է միայն աշակերտ-մարդ-անհատ հարաբերակցությունը։ Հենց դպրոցում պետք է ամենակարևոր արժեք համարենք Մարդուն և Մարդ ձևավորենք։

Մայրենիի դասընթացը ներառում է գրական հարուստ ժառանգություն, որոնց ուսումնասիրումը նպատակաուղղված է նոր սերնդին ճիշտ դաստիարակելու, բարոյակրթելու, նրա արժեհամակարգը ձևավորելու, շրջապատող աշխարհի նկատմամբ վերաբերմունք, համատեղ աշխատելու, համագործակցելու, կարողություններ ձևավորելու մշտատև գործին: Դասի ընթացքում որքան շատ են արժեքային համակարգի ձևավորմանը միտված աշխատանքները, այնքան զարգանում է արժեհամակարգը, աշակերտը դառնում է կիրթ, առաքինի և հետագայում մենք ունենում ենք քրիստոնեական արժեհամակարգով օժտված քաղաքացիներ:

Տարրական դասարանների մայրենիի դասընթացում առաջարկում եմ ուրույն տեղ հատկացնել ինքնուրույն ընթերցանությանը: Նպատակն է՝ լուծել աշակերտների և՛ ուսուցողական, և՛ դաստիարակչական խնդիրները: Ուսուցիչը կարող է ուղղորդված, ընտրովի, ընդհատված մեթոդներով ընտրել այնպիսի բնագրեր (հեքիաթներ, առակներ, բանաստեղծություններ, ասույթներ, պատմվածքներ, լեգենդներ, ավանդազրույցներ), որոնց ընթերցումը և վերլուծումը քայլ առ քայլ կատարելով, ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությամբ, կխթանի նրան, որ աշակերտներն ազատ կարտահայտեն իրենց մտքերը, կմերժեն բացասական հատկանիշները՝ անտարբերությունը, եսասիրությունը, գոռոզությունը. կձավորվի արժեքային դրական համակարգ: Աշակերտները իրենց մտքի և երևակայության անսահմանափակությամբ կթևածեն գրքերի աշխարհում և դրանով հանդերձ կտարբերակեն լավն ու վատը, չարն ու բարին, դրականն ու բացասական [4, էջ 5-9]:

Դասն ավելի <<հիշվող>>, <<ստացված>>, <<բովանդակալից>> դարձնելու համար տարրական դասարանում դասավանդող ուսուցիչներին առաջարկվում է դասապրոցեսն անցկացնել ԽԻԿ համակարգով: Բացի դրանից Մայրենիի դասագրքերը նույնպես կազմված են ԽԻԿ համակարգի տրամաբանությամբ:

Այսպիսով, խթանման փուլի նպատակն է ակտիվացնել սովորողներին, ուշադրությունը կենտրոնացնել դասավանդվող նյութին, տրամադրել և խթանել նրանց հետաքրքրությունը: Այս փուլում օգտագործվում է հետևյալ մեթոդները՝

- Մտագրոհ
- Խմբավորում

- Պրիզմա
- ԳՈՒՍ
- Հիմնակմախք կամ մանրակերտ
- Կանխագուշակություն ըստ բառերի և բառակապակցությունների

Իսկ իմաստի ընկալման փուլում իրականացվում է ուսուցանվող նյութի բովանդակության ընկալում: Այս փուլում արդյունավետ է հետևյալ մեթոդները՝

- T - աձև աղյուսակը
- Գաղափարների քարտեզագրում
- Վենի դիագրամ
- Խճանկար
- Խառնված հերթականություն
- Պատումի ուրվագծի աղյուսակ

Կշռադատման փուլում անհրաժեշտ է ամփոփել, հնարավորություն տալ սովորողներին օգտագործել, կիրառել իրենց սովորածն ու յուրացրածը: Կիրառվում են հետևյալ մեթոդները՝

- Քառաբաժան
- Կողմ- դեմ աղյուսակ
- Խմբային աշխատանք
- Բանավեճ
- Խորանարդում
- Կանխագուշակությունների աղյուսակ
- Շրջագայություն պատկերասրահում [5]:

Իհարկե, պարզ է, որ թե՛ ավանդական, և թե՛ ժամանակակից մեթոդների ընտրությունը կախված է ուսուցչից, որն էլ մեթոդն ընտրում է տվյալ դասին, նյութին, իրավիճակին համապատասխան: Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է հասնել նրան, որ մեթոդը ծառայի նյութի լավ յուրացմանը՝ վերջնարդյունքում աշակերտների շրջանում ձևավորելով ուրույն արժեհամակարգ:

Յուրաքանչյուրս պետք է անենք հնարավոր և անհնար յուրաքանչյուր քայլ, որպեսզի ունենանք բազմակողմանի, բազմաշերտ արժեհամակարգ ունեցող, ազգին պիտանի սերունդ։

Արժեհամակագի ձևավորման իմ փորձը <<Մայրենիի>> դասաժամերին

Դասի պլան

Թեման՝ Մատենադարան

Ժամաքանակը՝ 2 դասաժամ

Նպատակը կամ ուսումնառության ակնկալվող արդյունքները՝

ա) Գիտելիքներ

Աշակերտները պետք է իմանան՝

- Մատյան, մատենադարան, ժողովուրդ, գրվածք, աշխարհագրություն, մաթեմատիկա, հաղթանակ բառերի ուղղագրությունը,
- նոր բառեր և իմաստներ,
- գրիչ, մատյան, տուն բազմիմաստ բառերի իմաստները,
- գիտություն, բազում, տառապանք բառերի հոմանիշները,
- Մատենադարանի և այստեղ պահվող ձեռագրերի մասին,
- մագաղաթ պատրաստելու և գրքեր գրելու եղանակի մասին։

բ) Կարողություններ և հմտություններ

Աշակերտը պետք է կարողանա՝

- հասկանալով և սահուն ընթերցել բնագիրը,
- բնագրից առանձնացնել անհրաժեշտ փաստերը,
- ներկայացնել հնում մագաղաթի պատրաստման և գրքի գրության եղանակը, ձեռագրերի ստեղծմանը մասնակցող վարպետներից յուրաքանչյուրի դերը,
- ներկայացնել, թե որ գիտություններին են վերաբերում Մատենադարանում պահվող ձեռագրերը,
- պատմել Մատենադարանում պահվող ձեռագրերի << կենսագրությունը>>,
- գործնականում ճանաչել և տարբերել հատուկ և հասարակ գոյականները,

- կազմել տրված գոյականների հոգնակի թվի ձևը։

գ) Արժեքային համակարգ

Աշակերտը պետք է՝

- ճանաչի ազգային արժեքները ու մշակութային գանձփերը,
- գնահատի գրքի դերը անհատի և ժողովրդի կյանքում,
- ձգտի սիրով, խնամքով ու հոգածությամբ վերաբերվել գրքին,
- իմանալ գրադարանից օգտվելու կանոնները, խնամքով վերաբերվել գրադարանի գրքերին։

Դասի ընթացքը

1-ին դասաժամ

Խթանման փուլ

Մտագրոհի միջոցով բացահայտել աշակերտների մտքում Մատենադարան բառի առաջացրած զուգորդումները։

Պարզել, թե աշակերտներն ինչ գիտեն Մատենադարանի մասին, և նրանց նախապատրաստել տեքստի ընթերցմանը։

Իմաստի ընկալման փուլ

Մատենադարանի մասին նյութի ընթերցում՝ փոխգործուն նշանների համակարգի կիրառումով։

Բնագրային աշխատանք

Բառային աշխատանք

- սովորեցնել մագաղաթ, ծաղկող, գրապահոց, գրադարան, ձեռագրատուն բառերը,
- սովորեցնել գրիչ, մատյան, ձեռագիր, տուն բազմիմաստ բառերի իմաստները.
- պարզել կյանքի գնով բառակապակցության իմաստը

Տեքստային աշխատանք

- Հարցերի և առաջադրանքների արկղիկ, 1-4-րդ առաջադրանքներ

Տանը՝ կարդալ բնագրիը, սովորել բառերը, կատարել Բառերի գանձատուփի 3-րդ և 4-րդ առաջադրանքները։

2-րդ դասաժամ

Դասի սկզբում բնագրի ընթերցում, բառանյութի իմացության ամրապնդում։

Իմաստի ընկալման փուլ (շարունակություն)

Տեքստային առաջադրանք

- Մատենադարանի մասին լրացուցիչ տեղեկություններ
- Հարցեր բնագրի վերաբերյալ, այդ թվում՝ Հարցերի և առաջադրանքների արկղիկի 5-րդ առաջադրանքը.
- Մատենադարանի մուտքի մոտ կանգնեցված արձանների մասին (Դադարի պահ)։

Կշռադատման փուլ

Աշակերտները պետք է՝

- փորձեն բացատրել, թե ինչու են Մատենադարանի մուտքի առջև կանգնեցված մշակույթի և գիտության այդ գործիչների արձանները.
- մեկնաբանեն իմաստասիրությունը, կարծիք հայտնեն գրքի մասին.
- գնահատեն մարդկանց վերաբերմունքը գրքի նկատմամբ անցյալում և ներկայում, ինչպես նաև գրադարանի դերը մարդու կյանքում։

Քերականություն՝ հատուկ և հասարակ գոյականներ (Հարցերի և առաջադրանքների արկղիկի 6-րդ առաջադրանք) և սեռական հոլովի ձևերի գործնական իմացություն (Հարցերի և առաջադրանքների արկղիկի 7-րդ առաջադրանք)։

Տանը՝ կատարել Բառերի գանձատուփի 4-րդ և 6-րդ առաջադրանքները, Մատենադարանի մասին տեղեկություններ հավաքել (Պատմությունների և զրույցների զամբյուղի 1-ին առաջադրանք)։

Պատմությունների և զրույցների 2-րդ առաջադրանքը կարելի է կատարել խոսքի և հաղորդակցման դասաժամին [1, էջ 49]։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցն արվեստանոց է, որտեղ ձևավորվում է աճող սերնդի միտքը։ Հարկավոր է այն ամուր պահել, եթե չես ցանկանում ձեռքիցդ բաց թողնել ապագան։

Ա. Բարբյուս

Արժեքը համոզմունք է այն ցանկալի նպատակի վերաբերյալ, որը մոտիվացնում է գործողություն և ծառայում է որպես կյանքի ուղղորդող սկզբունք բազմաթիվ իրավիճակներում։

Արժեքներն ունեն նորմատիվ պարտադրողական բնույթ առ այն, թե ինչ պետք է անել կամ մտածել։ Արժեքներն առաջարկում են չափանիշներ կամ չափորոշիչներ հետևյալի համար՝ գնահատականներ տալ, կարծիքների հիմնավորում, մոտեցումներ և վարվելակերպ, վարքագծի պլանավորում և այլընտրանքների միջև ընտրություն, մյուսների վրա ներազդելու փորձ եւ սեփական «ես»-ի ներկայացում մյուսներին։ Արժեքները կապակցված են հույզերին, դրանք ակտիվացնելով՝ վերջիններս միախառնվում են զգացմունքներին։ Դրանք նաև ապահովում են կառուցվածքներ, որոնց շուրջ ավելի կոնկրետ մոտեցումներ են կազմակերպված։ Դրանք ներգործում են մոտեցումների վրա, և մարդկանց արժեքները գնահատելը կարող է օգնել կանխատեսել նրանց մոտեցումներն ու վարքը։ Մարդիկ կազմակերպում են իրենց արժեքները հիերարխիաներով՝ ըստ նրանց համեմատական կարևորության, և արժեքների համեմատական կարևորությունը հաճախ փոփոխվում է կյանքի տևողության ընթացքում։ Անհատական հոգեբանական մակարդակում արժեքները ներքին սոցիալական կողմնորոշիչներ են կամ բարոյական համոզմունքներ, որոնց մարդիկ դիմում են որպես իրենց գործողությունների վերջնական հիմնավորում։ Բայց և այնպես, արժեքները պարզապես անհատական գծեր չեն, այլ սոցիալական համաձայնություններ այն մասին, թե ինչն է ճիշտ, լավ կամ ինչը պետք է «փայփայել»։ Դրանք կոդեր են կամ գործողությունը ուղղորդող ընդհանուր սկզբունքներ, այլ ոչ թե հենց գործողություններ կամ կոնկրետ ստուգաթերթեր այն մասին, թե ինչ անել և ինչպես դա անել։ Արժեքային կողմնորոշումը մարդու համեմատաբար կայուն, ընտրովի վերաբերմունքն է նյութական

և հոգևոր մի շարք արժեքների ու իդեալների նկատմամբ, որոնք դիտարկվում են որպես անհատի կենսագործունեության կարիքների բավարարմանն անհրաժեշտ առարկաներ, նպատակներ կամ միջոցներ: Արժեքային կողմնորոշումներում կարծես կուտակվում է մարդու անհատական զարգացման ընթացքում ձեռք բերված կյանքի փորձը, որը պայմանավորում է նրա փոխհարաբերությունն այլ մարդկանց հետ, այդ թվում՝ վերաբերմունքն իր նկատմամբ: Արժեքային կողմնորոշումն անհատի կառուցվածքի կարևորագույն բաղադրիչն է: Զարգացած արժեքային կողմնորոշումն անհատի հաստատուն նշան է, նրա սոցիալականության ցուցանիշը: Արժեքային կողմնորոշումներից է բխում նաև անհատի ապրելակերպը:

Մայրենի լեզվի ուսուցման ընթացքում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակային բաղադրատարրը բնութագրվում է մայրենի լեզվի առանձնահատկություններով: Քանի որ այսօր հրամայական պահանջ է դառնում կրթության նպատակ համարել բազմակողմանիորեն զարգացած անհատի կերտումը: Տարբեր առարկաներից երեխաների ստացած գիտելիքները պետք է դիտվեն փոխադարձ կապերի մեջ, իսկ դա կարող է ապահավվել միջառարկայական կապերի շնորհիվ: Դրանցով են համակարգվում աշակերտների գիտելիքները, դրանք նպաստում են, որ երեխաները միևնույն երևույթը դիտարկեն տարբեր տեսանկյուններից, ընդհանրացնող եզրակացություններ անեն, ձևավորվի նրանց աշխարհայցքը:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային նկարագիր ունեցող սերունդ ու ոլորտի պատասխանատուների համար առավել տեսանելի են այն խնդիրները, որոնք պետք է լուծվեն աշակերտների արժեհամակարգի ու սոցիալական որակների ձևավորման գործընթացում, որն էլ, ի վերջո, պետք է լինի հանրակրթության բովանդակության առանցքը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., <<Մայրենի 4>>, Հանրակրթական դպրոցի դասագիրք, Երևան, էդիթ Պրինտ, 2012, էջ 49:

2. Մարտին Բարեթ, Լուիզ դե Բիվար, Բլեք Մայքլ Բիրամ և ուրիշներ, Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար, Համատեքստ, հասկացություններ և մոդել, հատոր 1, Եվրոպայի խորհուրդ, ARM Reference Framework Vol 1.pdf , https://rm.coe.int/prems-000821-arm-2510-reference-framework-vol-1-couv-texte-16x24-web/1680a1b757

3. Մայրենիի ծրագիր, հանրակրթական դպրոցի 1-6-րդ դասարանների համար: Հանրակրթության համակարգը:

4. Նախաշավիղ 6, 2016թ ., էջ 5-9:

5. https://lib.armedu.am/files/resource/files/2022-09-29/b4cdd2f6e89b2343f17b897bc9cbf23e.pdf